


I-488



ԽԱՅԱԿԱՆ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ՀՊԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 1

Խմբագրապետ
Մ. ԻՓԷԳՃԵԱՆ

Արտոնահատ
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«ԱՄԱՍԻԱ»ի նպասակը

Առ Աստուած (բանաս.)

Դաւառը կողայ

Դաւառը եւ իր մանուշիկն պարսականութիւնը

Անպարսաւանայ եւ, քանի որ անպարսաւանաստ եւ Գ. ԱԹԷՇԵԱՆ

Դաւառային շուրհ եւ թղթակցութիւններ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

ՄԱՄԻԿՈՆ ՎԱՐՃԱՊԵՏՈՒՆ

Յ. ԳԱՐԱՄԱՆԵԱՆ

Յաջորդ թիւով յօդուածներ՝

Բրոն. Գ. ԿԻԼԵԱՆԷ, ԳԱԳԻԿ ՕԶԱՆԵԱՆԷ,
ՀՄԱՅՆԱԿ ԱՐԱՄԵԱՆՑԷ եւ ԱՐԳԱՄ ԳՆՈՒՆԻԷ.

ԱՄԱՍԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԹՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏՃՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزنه سی مدیریتی

Խմբագրություն «ԱՄԱՍԻԱ» հիսամսեայ հանդեսի - Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին և 15ին, թուրքերէն և հայերէն բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն տարեկան 24 թիւ պիտի արժի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Քուրճիս սարեկան	1 մհնիս	Արսասահանան սարեկան	5 ֆր.
» վեցամսեայ	0.50 »	» վեցամսեայ	2.50 »

Բաժնեպէսը բացարձակապէս կանխիկ է: Ծանուցումներու համար տնանձին նպաստաւոր պայմաններ կը տրուին:

Տասը օրինակ «Ամասիա» սպառողին՝ մէկ օրինակ նուէր:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ

Այն հեղինակները որ կը փափաքեն իրենց հեղինակութիւնները «ԱՄԱՍԻԱ»-ի մէջ ազդարարուած ածական, թող բարեհաճին մէյմէկ օրինակ անոնցմէ խմբագրութեանը ուղարկել:

ԳԱԽԱՌԱՅԻ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ

Փափաքելի է որ գաւառացի գրողները, գաւառի կեանքը պատկերացնող իրենց գրութիւններովը զարդարեն «Ամասիա»-ի սիւնակները յաճախակի:

ԲՈՂՈՐ ԹԵՐԹ ՍՏԱՑՈՂՆԵՐՈՒՆ

«Ամասիա»-ի առաջին թիւէն մինչև երրորդ թիւը մեր բոլոր բարեկամներուն և ծանոթներուն իբր նմոշ պիտի զրկուի՝ ինչդրելով որ մինչև այն ասուն բաժանորդներու ճիշտ ցանկը բարեհաճին մեզի ղրկել: Իսկ անոնք որ չեն ուղեր բաժանորդագրուիլ, թող բարեհաճին առաջին առթիւ իրենց զրկուած թերթերը վերագործնել խմբագրութեանս:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեար Հ. Թապիպեան 1 օրինակ «Ամասիա» կը նուիրէ, Մարգուան՝ Անարպիլա գոյին՝ Օր. Շարլոթ Մէրսիքեանի և 1 օրինակ ալ Կ Պօլիս Օր. Շարլոթ Թապիպեանի:

Տեար Մ. Սիմոնեան 1 օրինակ «Ամասիա» կը նուիրէ, Եղգիաս՝ Իֆի գարս Տեար Արաւես Փարմագուգեանի:

Տեար Ռ. Պշադեան 1 օրինակ «Ամասիա» կը նուիրէ, Զիլէ՝ Տեար Միսակ Ներսիսեանի:

ՄԱՍԻՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 1

«ԱՄԱՍԻԱԻ ՆՊԱՏԱԿԸ»

Սահմանադրութենէն անմիջապէս վերջ՝ գաւառներուն մէջ գրա-
կան նոր շարժում մը սկսաւ։ Ամէն կողմէ զանազան ուղղութիւններով
թերթեր ու պարբերականներ հրատարակ հանուեցան, գաւառացիին այդ
տիրող շարժումին յարատեւութիւնն ապահովելու անկեղծ մտադրութեամբ։
Սակայն, զժրախատութիւն է ըսել որ, անոնցմէ ոմանք ապրող կեանքի
թարգմանը չի հանդիսանալուն՝ չի քաջալերուեցան հասարակութենէն և
ինկան ճամբուն երկայնքին, իրենց նիւթական ու բարոյական ուժերէն ու-
ժաթափ։ Իսկ ուրիշներ՝ գաւառացիին, եթէ ոչ բոլորին, գէթ մէկ մասին
հոգեբանութեան արտայայտիչը ըլլալուն և իրենց ծրագրին մէջ անսայթաք
ընթանալուն՝ քաջալերուեցան և կ'ապրին այսօր իրենց օգտակար գերին
մէջ, թէև դարձեալ նիւթական մեծ զոհողութեամբ, միմիայն պարտակա-
նութեան ձայնին ունկնդրած ըլլալու գոհունակութիւնը վայելելով։

Ահա, թերթիս խմբագրական ու վարչական մարմինները, գաւառի
հոգեբանութիւնը արտայայտող զուտ գաւառական թերթի մը հրամայողա-

կան պահանջը և անոր յարատեւելու ու օգտակար հանդիսանալու պայմանները ըրջօրէն նկատի առնելէ յետոյ էր որ որոշեցին հրապարակ նետուիլ, երբ իրենց նիւթական ու բարոյական ոյժերը ապահովուած ու բաւարար զգային:

Արդ, «Ամասիա» կիսամետայ հանգէսը նիւթական և բարոյական պահանջուած ապահովութիւններով հրապարակ կը հանէ իր Ա. թիւը, գաւառի ծոցը ապրելուն, ուղղակի անոր ցաւերն ու պէտքերը շեշտող բովանդակութեամբ մը: Այո՛, Ա՛ն առանց ազգի, կրօնի և ցեղի խտրութեան պիտի հետաքրքրուի գաւառի գործունէութիւններով, պիտի լայ անոր արցունքներովը, պիտի երգէ անոր վիշտը, պիտի նկարէ անոր տառապանքները, պիտի ներբողէ անոր յաջողութիւնները, ճամբայ ցոյց պիտի տայ անոր յառաջացումին, բողոքի ձայն պիտի բարձրացնէ զայն կաշկանդող բռնութիւններուն դէմ, մութ ոյժերու զոհը ըլլալէ պիտի զգուշացնէ գայն, պիտի պաշտպանէ երկար տարիներու տառապանքի յուժին տակ ընկճուած գաւառացի հայուն, թուրքին, յայնին և վերջապէս օսմանցի հասարակութեան շահերն ու իրաւունքները, բոլոր ճնշողներու ու անիրաւոյններու դէմ: Ա՛ն ոյժ պիտի տայ իր կարողութեան չափով գաւառացի զրականութեան մը ստեղծումին ու զօրացումին: Ա՛ն պիտի զբաղի գաւառի կրթական, ընկերային, արնտեսական, բանտ որական և քաղաքական կենսական ու իրական հարցերով, վերջապէս Ա՛ն պիտի ջանայ ապեղանին գաւառի գաւառի շարժումովէրքերուն:

«Ամասիա» պիտի հիւրընկալէ նաև Գիտական, Գրական, Բանաստեղծական, Պատմական և Ընկերային յօդուածներ ու ուսումնասիրութիւններ ծանօթ գրիչներու կողմէ ստորագրուած:

Խմբագրական մարմինը նիւթական ու է վարձատրութիւն չ'ակնկալելով «Ամասիա»էն, եթէ յաւակնատութիւն չի նկատուիր, կը խոստանայ առկէն կերպով օգտակար հանդիսանալու աշխատիլ գաւառին և ընթերցող հասարակութեան: Եթէ երբէք մի քիչ քաջալերուելու բախտն ունենայ, բարոյական ամենամեծ վարձատրութիւնը պիտի նկատէ:

Խմբագրութիւնս, օսմանցի հայրենակիցներուն՝ իրենց սրտերն աւելի մօտէն իրարու կրնալ բանալու դիւրութիւնն ընծայելու և մեր կառավարութեան գաւառի ժողովրդին իրական ցաւերն ու պահանջները ուղղակի ըսելու կարելիութիւնն ունենալու համար, «Ամասիա»ի 16 էջերէն 4ը և թերեւս, իհարկէն աւելի էջերը թրքատառ թրքերէնի յատկացնել որոշած է:

Խմբագրութեանս առաջին գործը եղած է նիւթական ամեն կերպ ապահովութիւն ձեռք բերելէ յետոյ, գաւառի ու Պոլսոյ շատ սիրուած ու

ծանօթ գրիչներու աշխատակցութիւնն ապահովելոյ, այնպէս որ վստահ կըրնան ըլլալ մեր ընթերցողները թէ՛ գաւառի ցաւերն երգող և անոնցմով հալող ու մաշող ծանօթ գրիչներու արտագրութիւնները պիտի ըմբոյնեն գրեթէ ամէն թիւերուն մէջ ալ անպակաս:

Թերթը 15 օրն անգամ մը, ամսոյն 1ին և 15ին ըստ տեսնելով՝ տարւոյն ընթացքին ամբողջ 24 թիւ պիտի տայ իր բաժանորդներուն, անոնցմէ իբր բաժնեգին՝ միմիայն տպագրական աննշան ծախքը զանձնելով:

Արդ, խմբագրութիւնս իր անշահախնդիր ոգին ու իր ընդգրկած ծրագիրը պարզելով կը դիմէ բոլոր գաւառի ցաւերովը մտածող, անոր յառաջացումին աշխատող գրասէր հասարակութեան, հայ և թուրք թերթերու խմբագրութիւններուն, որ իրենց օժանդակութեան բաժինը բերեն միայնեն իր համեստ ջանքերուն, «Ամասիան» իր մտադրած իսկական նպատակակէտին հասցնելու համար:

ԽՄԲ.

ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Պայծառ ու ժպտուն կեանքով մ'օժտւած,
Վեսանքներէ զուրկ, ցաւէ զերծ՝ Ասուած,
Երկրիս մեղոյէ զոգն հանգիստ ու անյաղք
Ապրիլն, ա՛հ ի՞նչ բաղդ...:

Վե՛տ զերծ ապրիլ, եւ սուրալ միայն
Ժպտի անբառամ եղեմն անսահման,
Նըջանիկ ապրիլ՝ իսկալով բարձր,
Ա՛սուած, ի՞նչ կեանք քաղցր...:

Ամասիա

Ո՛հ կեանքի չքնաղ սա ծոցը անամպ,
Ապրիլն՝ ի՞նչ սիրուն, եւ բարի մահուամբ,
Մեռելիլն՝ ի՞նչ վսեմ, քաղուիլն՝ ի՞նչ ազնիւ,
Ա՛սուած, ի՞նչ պատիւ...:

Բայց ինչո՞ւ ամառս, զուարթ այս կեանքին,
Մեջ դեռ կը բողբոս որ դեռ լալագին
Հեծէ ողջ Աշխարհ, լուսած ո՛հ յոյսէ,
Ա՛սուած սե՛ս, լսե՛...:

ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

ԳԱԻԱՌԸ ԿՈՒԼԱՅ

Հակառակ դրականութիւն մըն է
դարձեր դուքիս Հայուն համար՝ իր ցաւերուն
ոպեղանքն ու դարմանք վնասել
աղայական լայնի և ապարդիւն բողբոյն
մէջ: Կարծիր բռնակալին տապալումէն
և Սաամանադրական Արեւուն փողփողումէն
հաղիւ պա՛հ մը դադրած հառաչներն

ու գանգատները այս տառապնալ ցեղին՝
դարձեալ սկսած են լեհնել թերթերու սիւն-
նակները և ընթերցողին սրտը բզբառող
եղելութիւններ զիրար կը խաչաձևեն ա-
մէն օր ու գազանական վայրագութիւն-
ները կուգան ցնցել մեզ:

Գաւառը կուլայ, գաւառը կը գանգա-

տի. Սասունին, Վանին, Մուշին, Տիար-
պէքիւրին և Հայաստանի զանազան հեռա-
ւոր ու մերձաւոր գաւառներէն՝ լացի,
գանգատի, բողոքի հեռագիրներ ու տե-
ղեկագիրներ է որ կը տեղան պատրիար-
քարանն ու հայ խմբագրատուները, որոնք
իրենց կարգին իբր արձագանգ կուլան, կը
գանգատն ու կը բողոքեն. և սակայն այդ
ամէն լայն ու գանգատը, բողոքն ու ի-
րարանցումը ո՛չ մէկ դարման կը հայթայ-
թեն Հայուն ցաւերուն և կը շարունակ-
ուին սպաննութիւններն ու խոշտանգում-
ները, աւարառութիւններն ու հրդեհները
բռնադրաւումներն ու բռնաբարումները:

Ո՛վ է արդեօք պատասխանատուն այս
չարքներուն. միամիտ հարցում, պատի
բանն ինքեցողներն, Դու միայն կաս յե-
րուսաղեմ. ո՛վ պատի բլրայ, անշուշտ կա-
ռավարութիւնը, որ Վոյլ կուտայ, որ չի
պտտօէր, որ ասպարէզը բայ թողուցած է
չարագործներուն առջեւ, որ գանգատնե-
րը չի քննիր արդարութեամբ և յանձա-
ւորները չենթարկիր օրէնքի խստութեան:

Շատ լաւ կ'ըմբռնեմ այս ամենուն մէջ
կառավարութեան դերը. կը հասկնամ թէ
երկրին մէջ յետաշրջականները գործի վրայ
են. գիտեմ թէ Տիրողի ու Տիրապետողի
սկզբունքները տակաւին իրենց գերագոյն
թափին մէջ կը գտնուին. ակներե է թէ
Արդարութեան, Եղբայրութեան, Հաւա-
սարութեան թառերն են միայն և ոչ գոր-
ծերը որ իրականութիւնը կը ներկայացնեն,
և սակայն նոյնքան ալ որոշ գիտեմ որ կա-
ռավարութիւնը առանց ժողովրդի օժան-
դակութեան կարող չէ չարքը արմատա-
խլ ընել, ենթադրելով նոյն իսկ որ ու-
նենայ կամեցողութիւն անպայման, և
պատմական ճշմարտութիւն մը կը սեպեմ
թէ յետաշրջականութիւնը, տիրողի ու
տիրապետողի անհեթեթութիւնը, ազ-
գայնամոլական կործանարար ձգտումները
միայն ժամանակն ու դատարարակութիւ-
նը պիտի կրնան ջնջել և բարեշր ումի

տրեղերական, անյղջի, յամբարթայ՝ այլ
անվրէպ օրէնքին ազդեցութեամբն է որ
արդարութիւնն ու եղբայրութիւնը, հա-
ւասարութիւնն ու ճշմարտութիւնը պիտի
կարողանան աշխատիտ: աշխարի վրայ
ընդհանրապէս, և մեր երկրին վրայ մաւ-
նաւորապէս:

Եւ այս խոհային հոմանիւտ համար կա-
ռավարութեան ջանքերը չեն բաւեր, եթէ
մեր երկրին հաւաքական ուժերը չմիա-
նան անոնց. այդ բաղձալի իրականութիւ-
նը վայելելու համար ԱՄԷՆ ՄԱՐԴ պար-
տականութիւններ ունի կատարելիք, իր
խրճիթին մէջ գողգողացող շինականէն ըս-
կուեալ մընչեւ պալատին մէջ բազմող
թողաւորը: Այդ պարտականութիւնները
թուելու նպատակ չունինք. խիղճը և օ-
րէնքը արդէն կը ճշդեն գտնուք:

Հիմա շատ բնական է որ մեզ հարցուի
թէ, մինչեւ որ ժամանակն ու բարեշր-
ջումը կատարեն իրենց դերը, հարկ է որ
մենք աշխարային համակերպութեամբ բա-
պտող լլլանք և անտրտունջ կրենք բար-
բարստութեան աղէտները. ո՛չ երբէք. ու
մեր այս յողուածին նպատակը՝ այդ պա-
րագան շիջակ է:

Վայրի գազաններ կան, որոնք կրնան
կրթուիլ և անվնաս դառնալ մարդկու-
թեան. կը գտնուին սոկայն գրչախանձ
բորենիներ ևս, որոնք երբե՛ք չեն թու-
ղուր իրենց արիւնստիւմ բնազդը, արջը
իր պզտիկ վիճակին մէջ կը կրթուի բայց
գայլը՝ ո՛չ. պէտք է դատապարտենք
գայն որ կը բզբաէ մեր գառները հետե-
ւելով իր բնազդին, թէ՛ հարկ է որ աշ-
խատինք պաշտպանել ինքզինքնիս անոր
ճիրաններուն դէմ. գիտենք որ օձը թու-
նաւոր է ու խայթող. տիմարութիւն չէ՞
չջախջախել անոր գլուխը՝ երբ մեր ճամ-
բուն վրայ առջեւնիս կը տնկուի:

Մովսիսական օրէնքը՝ իբ ժամանակի
մարդկութեան համար կը տրամադրեր
աչքը տեղ աչք և ակռայի տեղ ակռայ.

և թէ մեր ժամանակին օրէնքը սահմանափակած է մեր այդ բնական իրաւունքը, սակայն, բացէ՛ք Օսմ. Պատժական Օրէնադիրքը, ու պիտի տեսնէք որ ԻնՁԲԻ ՈՒ ԲՆԱԿԱՐԱՆԻ, ԿԵԱՆՔԻ ԵՒ ՊԱՏԻԻ պաշտպանութեան համար յանցաւոր չէ մէկը երբ ԿԸՍՏԻՊՈՒԻ իր թշնամբն վերաւորել կամ սպաննել. օրէնքը նախատեսած է որ երբ մարդ մը յարձակում կը կրէ ուրիշէ մը որ կուգայ զինքը սպաննել, իր կեանքը ազատելու համար պէտք է որ կարող ըլլայ հակառակորդը սպաննելու, քանի որ ԲՆԱԿԱՆ ԻՐԱԽՈՒՆՔ մըն է սն, և ծիծաղելի է հաստատել զբական օրէնք մը քնակաւն հակառակ. հարկաւ օրէնքը, որպէսզի չարաշար չգործադրուի իր սուած թոյլտուութիւնը, ինքնապաշտպանութեան սահմանները գծած է, և ամէնէն ուշագրաւ հարցը հոն է, որ այսօր երբ գաւառը կուլայ, կը գանգաւոր, մեծագոյն մատամբ իր կրած ալետներուն մէջ, անգիտանալն է լրին Օրէնքին սուած այդ թոյլտուութիւնը և թեւրանալը ինքնապաշտպանութեան անորոշութեամբ զգալուն ու գործադրելուն մէջ:

գաւառը կ'ուլայ, գաւառը կը գանգաւոր. և սակայն լրջօրէն չի մտածեր իր յաւերսուն դարձանքն՝ ինքնապաշտպանութեան վրայ. պէ՛տք է, այո՛, որ բողոքէ իր կրած անիրաւութեանց դէմ, պահանջէ արդարութիւն, բայց միեւնոյն տոնն ինքնապաշտպանութեան դիմելով, պարտաւոր է զգուշիւ օրէնքին թոյլտուութեան և այս կերպով թէ կառավարութեան համար բարդութիւններու սակաւաւորն և թէ իրեն համար չարիքներութեթեանաւորն միջոցներ տեսնելով:

Կ'ըսուի թէ, կառավարութիւնը չի թոյլարեր որ հայերը զէնք կրեն. բայց իրաւունք ունի՞ թոյլատրելու որ քիւրտերը կրեն, անշուշտ երկրին անդորրութիւնը կը պահանջէ որ զինաթափ ըլլան բը-

նակիւնները, որպէսզի թէ իրարու չվատեն և թէ կառավարութեան դէմ չըմբոստանան. սակայն կառավարութեան այս իրաւունքը չկրնար սահմանափակուած լալ միայն հայ տարրին վրայ, այդ իրաւունքը պէտք է որ գործադրուի Թուրքին ալ, Քիւրտին ալ, Յոյսին ալ և մէկ խօսքով բաղկացուցիչ ԲՈՂՈՐ Օսմանցի ազգութիւններուն վրայ անխտիր, այս է Սահմանադրական Թուրքիայի իրաւունքին բնութիւնը. և քանի գործադրուած չէ, Հայը պարտաւոր չէ թողուլ որ զինքը մորթեն, բո ինչքերը յափշտակեն, իր պատիւը բռնաբարեն, ու իրեն իրաւունքին ըլլայ միայն լալ ու բողոքել:

Գաւառը կուլայ, ու պիտի լայ դեռ երկար ատեն, քանի ինքնապաշտպանութեան սնտար մը կը մնայ. գաւառը կը բողոքէ, ու պիտի բողոքէ դեռ չարունակ ապարդւն, քանի չգիտեր ԲՈՂՈՒՆԵԼԷ աւելի ԿԱՀԱՆՁԵԼ, ԽՕՍԵԼԷ աւելի ԳՈՐԾԵԼ:

Գլանա՛նք պահել մեր դիրքը. մենք Օսմ. ազատ քաղաքացիներ ենք ու ամէնէն աւելի մեր արիւնքով ազատագրութեան տարեգրութիւնները ստորագրած են Սահմանադրական Թուրքիայի մէջ: Ո՛չ, կառավարութիւնը չի կրնար այտարարել թէ երկրին մէջ արիւնարբու գազաններ չկան, ու քանի անոնք ճնջուած չեն, աւսոյցմով չընկալատուողներն ալ, ըլլան Հայ թէ Թուրք, Քիւրտ թէ Յոյն, իրաւունք ունին ինքնապաշտպանութեան դիմելու: Այո՛, կառավարութիւնն է որ իր զինուորներով, որ իր կարգած պաշտօնեաներով պիտի պաշտպանէ մեր կեանքն ու պատիւը, մեր ինչքն ու ստացուածքը. սակայն այս պաշտպանութեան գործը պաշտպանա՛լին ալ օժանդակութիւնովը կրնայ լաւապէս իրականանալ. երբ ճամբորդութեան մէջ կը հանդիպին յանկարծ աւազակներու, հո՛ն, այդ պահուն, ո՛չ զինուոր կը տեսնես և ո՛չ պաշտօնեայ,

որպէսզի պաշտպանեն քու կեանքդ ու տաշտուածքդ, ու կառավարութիւնը չկըրնար ըսել, հոգ չէ, կողոպտուիր, էշ նաւատակ եղիր, վերջէն բողոք կը տրուի, յանցաւորը կը պատժուի, որուն տրուած կախաղան, պատիժն անգամ, զժրաղղաւ

Մարգուսն

բար չկրնար կեանք տալ քեզի, քանի որ արդէն մեռած եւ. և օրէնքը անաւայդ և նման պարագաներու մէջ տուած է քեզի ինքնասպանութեան իրաւունքը. ինչո՞ւ չես գործադրեր:

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԳԱԽԱՌԸ

ԵՒ

ԻՐ ՄԱՍՈՒԼԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Երկիրներ կան որ իրենց մայրաքաղաքներով կը ճանչցուին, անոնց հոգին կեդրոնացած է մայր-քաղքին մէջ. ան է իրենց վրայ իշխողը նիւթապէս թէ բարոյապէս: Ան տնտեսորակ ամենամեծ քաղաքն է. գիտութիւն և արուեստ անկէ կը բղխին, յառաջդիմութեան լոյսը անկէ կը ճառագայթէ: Շփացած քաղաքն է այն, կառավարական, բնակրային, և քաղաքակրթական ամէն խնամք անոր կը շնայուի և յաճախ կը մոխուի:

Թուրքիա այս կարգի երկիրներուն մէջ առաջին տեղը գրաւողներէն է: Սեզմէ զէպ արեւելք և հիւսիսային արեւելք ապրող և արեւելեան ծագում ունեցող ազգերուն համար թուրքիա չկայ, խալիֆային երկիրը Պոլիսն է—Իսթանպօլը կամ Իսթանպօլն է. Պոլիս՝ կայսրութեան անուն տեղը բռնած է. Տիարպէթիքին և Էտիքնէյին հաւատարապէս Պոլսեցիներ են կովկասցիի կամ թրքաստանցիի աչքին. Իզմիր կամ Եմետա գաղղը անհրաժեշտ Պոլսոյ ճամբորդ է իրենց համար:

Կեդրոնացումը իրենց մոտոտիպար բնութենով մեծ պաշտօնէութիւնը հաճութեամբ դիտած է այս երեւոյթը և մըշտ քաջակերած է: Թուրքիոյ մէջ կեդրոնի ժողովուրդին կարգ մը տուրքեր է գին-

ուորագրութեան տաղտուկներէն երկար ժամանակ ազատ մնալն ևս հաստատ աւագոյց է որ Պոլիս ամէն ինչ էր, իսկ գաւառը ոչինչ:

Կառավարութեան կազմին մէջ բնիկ Պոլսեցի նախարարներ գաւառներու կառուարութիւնը այդ տեղերէն իրենց ընդունած նուէրներու որակէն և քանակէն կը գնահատէին: Այսպէս խնձոր և պաւսիա, քիչ մըն ալ սալոր Ամասիա կը նըշտակէր, ապախտը Կեսարիոյ հոմանիշ էր, Տրապիզոն կարագ իւղի իմաստն ունէր. բոլոր Վանցին բնակիկը էր և բոլոր Գասթէմունիցլէն Պուշպաւնի:

Գաւառացին ծագում ունեցող պետական մարդիկ բնիկ Պոլսեցիներէն սարքեր էին ստով միայն որ, իրենց համար թուրքիա երկու մաս ունէր. նախ՝ Պոլիս և յետոյ իրենց հայրենիքը: Կը պատմուի թէ Պաղատտի մեծ գծին յատակադիրը, երբ բաւարապէս Այի Սաիպ բաշայի ներկայացուցաւ ռազմական տեսակետէն իր դիտողութիւնը բնելու, բաշան ամէն բանին հաւնած է, միայն գծին իր հայրենիքը—Կեսարիոյ Թալաս աւանին մօտիկ Քիւլիւքիօյ չհանդիպելը տեսնելով բարկացած է և գրչի մէկ հարուածով գիծը այդ կողմ դարձուցած է քարտէսին վրայ: Մինչ-

դեռ իր յաջորդը դաժձեալ առաջուան վիճակին մէջ պահել անօրինաժ է:

Երկիրը այս վիճակին մէջ էր բռնապետութեան ժամանակ, երբ գաւառացիներ իր ձայնը—չոր մասնուր չունէր: Սահմանադրական շրջանին մէջ գաւառին ալիւսյոյ մատերուն մէջ հրատարակութիւններ երեւալ սկսան, սակայն անոնցմէ ոմանք մասնապիտական ուղղութիւն ստացան, ուրիշներ ժողովուրդի որոշ դասակարգի պէտքին միայն գոհացում տուին, քիչերը միայն գաւառի ցաւին և պէտքին թարգման հանդիսացան:

Կեդրոնի մասնուր, հակառակ իր բարի կամեցողութեան և գաւառի հանդէպ ունեցած համակրութեան, չի կրցաւ այնքան օգտակար ըլլալ գաւառի վերքերուն: Անոր մէջ երեւցած բոլոր գաւառային լուրերը, թղթակցութիւնները, սրքան ալ զգայալունց լինին անոնք, գլխաւորաբար կը կարգայունին գաւառացիներու կողմէ: Այդ լուրերէն հարիւրին բնութենէն հինգը բոլորովին աննկատ կ'անցնին պաշտօնական մարմիններու աչքին առջեւէն. նկատի առնուած հարիւրին չ'ընդին ալ «սուտ է» «սխալ է» «անդորութիւնը կատարեալ է», կամ շատ շատ «մենք տեղեկութիւն չունինք» պատասխանը կը տրուի: Վարչապետին կամ ներքին շփոթութիւններու նախարարին բան հասկցնելու համար Կեդրոնի մասնուրին գաւառ ողբալը ցարդ գալին գլուխը աւետարան կ'արդայէ տարբեր արդիւնք մը չունեցաւ:

Գաւառի մասնուր տեղական պէտքերը ամէն օր կամ ամէն շաբաթ նկարագրելով, մանրամասնելով, պարզաբանելով, շեշտելով, ուժեղնակէ մասնանշելու և ի հարկին ամենատարածակ գոռում գոչում հանելով, թէ տեղացի ժողովուրդին և թէ տեղաւն կառավարութեան ուշադրութիւնը կարող է կեդրոնացնել հարկ եղած կէտի վրայ: Կուսակալի մը կամ գաւառ-

ապետի մը ականջը ներկայ շրջանի մէջ, հաւատա՛, սիրելի ընթերցող, աւելի շատ կը լսէ քան նախարարի մը ականջը, որովհետեւ հասարակ պաշտօններէ մէկ ուստուով նախարարական աթոռն բարձրացող այս մարդոյ ականջները շտապում խուլցած են և փառամոլութիւնը իրենց աչքերը գոյած է:

Գաւառային պարբերական հրատարակութիւններէն անոնք որ իրենց համար գլխաւոր ուղղութիւն ընտրած են հանրային բնոյթ ունեցող խնդիրներով զբաղել, պէտք է շատ որոշ տեսնեն իրենց ուղին և ճշդէն իրենց սահմանները:

Գերմանիոյ Monisme, Անգլիոյ Feminisme, Ռուսիոյ Nihilisme և Ֆրանսայի Atheisme հաւատարապէս օգտակարութեան չ'ընդին նիւթեր են գաւառներու մեր ժողովուրդին համար: Միւս կողմէ գաւառացի բանուորին հացի խնդիրը և գաւառացի երկրագործին հարկի խնդիրը իրենց ամենատարածական և ամենապարզ ձևին մէջ կարելի է մշակել իբրեւ կենսական խնդիրներ և օգտակար եզրակացութիւններ հանել:

Խօսքը մասնաւորելով Ամասիա հրատարակուող թերթերու, անոնք կոչուած են թանկագին ծառայութիւններ մատուցանելու գաւառիս բնակչութեան: Եթէ գիտնան ծայրայեղութիւններէ ըզգուշանալ և միայն ժողովրդեան նիւթական և բարոյական զարգացման աշխատիլ. գաւառի ժողովուրդը իրենց հանդէպ շնորհապարտ պիտի լինի:

Գաւառիս մէջ տարազագործութիւն, ճարտարարուեստ, վաճառականութիւն, փոխադրութիւն, հանրային կրթութիւն, Ազգ. դաստիարակութիւն, ամէն ինչ սաղմնային, անկազմ, անկերպարան վիճակի մէջ է. մասնուրին անկ է այս խնդիրներէն իւրաքանչիւրը ձեռք առնել և տեղական պարագաներու պատշաճեցնելով քննել, ի հարկին քննադատել և

առանց անձնական գծուձ հաշիւներու մէջ
մտնելու ճամբաւներ ցոյց տալ և մըլոյցներ
հնարել :

Ամասիոյ գաւառը իր ամբողջութեամբ
անստեղծական զարգացման գերազանցողական
ընդունակ կեդրոն մ'է, իսկ Ամասիա քա-
ղաքը մասնաւորապէս իր պողպատեւ հողով,
առողջարար կլիմայով, գետային շրջքով

Եւ մետաքսի արտադրութեան ընդունա-
կութիւնով ապագային Փոքր Ասիոյ Լիոնը
լլլալու կոչումը ունի : Ժողովրդական
մամուլի անձնուէր զործունէութեան եւ
զական միջավայր մ'է Ամասիա որմէ կը
յուսամ թէ օգաւելի պիտի զխնաս սեղ-
ւոյս մամուլի ներկայալուցչները :

3. ԳԱՐԱՄԱՆԵԱՆ

ԱՆՊԱՐՏԱՃԱՆԱԶ ԵՆ
ԳՈՆԻ ՈՐ
ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆ

Պարագաներ կան, երբ մարդ զինք
կառավարող ազդականներն, իր զործունե-
ութեան պայմաններն և իր մինչև ցարդ
հետադիմացած ծրագրն ու միջոցները մոռ-
նալով՝ կը գիտակցի և ուղղակի իր զգա-
լումներուն — ներքին ձայնին անսպառ-
յանկարծական պոթկումով մը կը խոս-
տովանի իր մինչև չմտ հետազննած ուղ-
ղութեան դատապարտելութիւնն ու ան-
բնականութիւնը։ Այս կերպ յայտնու-
թիւններ յաճախակի և մշտ կը պատա-
հին տազնապալից ու յուզումնայից վայր-
կեաններուն մէջ, երբ մարդ զգայուն ու
լարուած վիճակ մ'ունենալով կը մոռնայ
խաղաղ ու հանգիստ միջոցներով իր և
իր ղեկավարած կուսակցութեան հետա-
պնդած ուղղութիւնն ու քաղաքակա-
նութիւնը։ Ընչոք առաջինէք զաներ,
սա Խառական պատերազմին և երկրն
քաղաքական անորոշ վիճակին վերջ մը
ստալու մտադրութեամբ պատգամաւորա-
կան ժողովի փութացումին համար եղած
Պոլիս զանուող Օսմ. երեսփոխաններու
յուզումնայից խորհրդակցական ժողովին
մէջ, ամբողջ երեք տարի ալ ժողովն
ու երկրորդ ղեկավարող՝ Ահմէտ Բազա-
պէյն սա ուշադրաւ յայտարարութիւննե-
րը թէ՛ «Մեր պաշտօնականը՝ զայնազանե-
սխեալ միջեւ փաշայսէր անարտահանա-

են, քանի որ անպատասխանաբար են»։ Ճիշդ մարշալ և անկեղծ հայրենասերի խոստովանություն է... Գովիյի յայտարարություն... Սակայն մենք կր փութանք հարյունելու թե՛ այդ վիճակին ստեղծման միակ պատասխանատուն ո՞վ է, և ի՞նչ բարձրագույն ինստիտուտ է քաղաքական հայտարարելու մեղի այս խորխորատին եղերքը։ Իհրաւ, կարծես քիչ յետոյ անդուան ի՞նչո՞ր գլորելու համար։

Կր յուսամ թէ չի պիտի քաշուի իրա-
կանութիւնը րտելէ, քանի որ հիմա ան-
կեղծ զգացումներէ կր տարուի, և պիտի
խոստովանի թէ իր զեկավարած կուսակ-
ցութիւնն էր որ իր նեղ, անբնական ու
սղգայնամոլական ծրագրիովն ու եկեկաշ
եկեկաշական քաղաքականութեամբ մեկ
բերաւ այս անդունդին եզերքը: Անոնք
էին որ սահմանադրական կարգերու հաս-
տատումէն անմիջապէս վերջ՝ իրենց լնդ-
գրկած ծրագրէն ու կուսակցամոլական
ձգտումներէն առաջնորդուած՝ իրենց
կուսակիցները սկսան այս ու ան պաշ-
տոններուն՝ ահաւորել: Մարդուն համար
գործ փնտռելին և ո՛չ թէ գործին մարդ-
այսպիսի պատասխանատու պաշտոններ
յանձնելին անանկ պաշտոնեաներու, ու
րոնց կարողութիւնը երբէք չի համապա-
տասխաներ այդ իրենց յանձնուած գոր-

ծին : Անոնք գաւառները ճամբեցին այն-
տեսակ մարմիններ, որոնք անկարող ու
անճարակ և աւելի ճիշտը հացկատակներ,
իրենց պաշտօնատեղին հասնելուն, ա-
ռաջին առթիւ, քաղաքին տիրող, ճնշող
ու ազդեցիկ պէյիսն ու աղայիսն հովանիին
տակ հովանաւորուելով գործեցին ու կը
գործեն անոնց հաշւոյն, փոխան գաւառի
տառապող, աբիւն արդունք լաշող աշ-
խատաւոր դասակարգին : Այս՝, այսօր
կառավարական կազմին մէջ անպարտա-
ճանաչներ կը վիտան, որոնք երկրին վը-
տանքը դառնալով՝ գաւառացին անել ու
աննախանձելի վիճակի մը մատնած են :
Գաւառի ցաւն ու վրշտը մեծ է այս տե-
սակէտով ալ, ա՛ն կուլայ իր ցաւը կա-
ռավարութեան՝ հանդարտելու համար,
սակայն աւելի կ'աբխենուի, ա՛ն իր վեր-
քերուն դարձան : Կը հայցէ անկէ, սա-
կայս աւելի կը կոտորէ : Կը բողբէ ա-
նխաւորիսներու, բռնութիւններու, անարե-
մաղիկ ցարդերու, բռնագրաւումներու, ռ-
բոնարարումներու : փոխան ապահովու-
թեան, աւելի կեղեքուելուն աւելի վսակ-
ցուելուն պատճառ կը դառնայ :

Գաւառը՝ որ սահմանադրական կարգե-
լու հաստատումէն յետոյ՝ բարեխնամ ու
արդարակորով կառավարական կազմը
կ'ազդէ տեսնել իր շուրջը, տակաւ յուսու-
հատելով կը յրատանայ անկէ, անկէն մը
քաջուելով միայնակ լալու, և եթէ կրնայ
ը վերքին դարձանուն իր իսկ ձեռքերով
ընելու :

Այսօր գաւառը՝ որ երկրին այս ողբալի
կայութեան վրայ անկեղծօրէն ու իսկա-
պէս դառնալով կ'արտասուէ, ես պիտի ըսեմ
սքիւր արտասուքներուն հետ անէծք զրկէ
այն զեկավարներուն, որոնք իրենց ան-
քաղաքագէտ ու անպարտաճանաչ գոր-
ծունէութեամբը ներկայ տխուր պայման-
ներու ստեղծման պատճառ եղան :

Այս՝, «սեր պաշտօնականները գայմագամէն
սկսեալ մինչև վարչապետը անպարտաճա-

նաչ են, քանի որ անպատասխանատու են» :
Այս խօսքերուն ճշմարտութիւնը հաստա-
տելու համար հեռունքը երթալու պէտք
չ'կայ, օրուան թերթերը աչքէ անցնել
հերքէ իւր ապացոյց՝ սա քաղաքական
տագնապալից շրջանին նախարարական
պաշտօններու հանդէպ ցոյց տրուած ան-
տարբերութիւնը : Երկրին երբ խաղաղ էր
այդ պաշտօններն ու աթոռները իրարմէ
կորզելու կը ճգնէին, սակայն այսօր երբ
երկրին ու ժողովուրդը անձնութեան
ու գործունէութեան կ'սպասէ իրենցմէ,
ամէն մարդ պատասխանատուութենէ
խոյս տալով կը մեքփէ իրեն առաջարկե-
լած պաշտօնն ու գործը, ա՛նա երկրին
իրական վիճակն ու ձրի հայրենասէրե-
րուն ամբողջ հոգեբանութիւնը... : Ահա՛,
այս երեւոյթին ալ պատասխանատուն,
դարձեալ Ահմէտ Րիզայի կուսակցութիւնն
է որ ազգայնամոլական հայեացքներէ ա-
ռաջնորդուելուն չգիտցաւ զնահատել
անձնուէրներն ու պարտաճանաչները,
վերջապէս չգիտցաւ իր գաւառացի ու
պօլսեցի հայրենակիցներուն կարողու-
թիւններէն ու անկեղծութենէն օգտուիլ,
այլ գործի վրայ պահեց այնպիսիներ, ու-
րոնք իրենց իսկ վարչագիտութեամբն
երկիրը ներքնապէս ու արտաքնապէս
ներկայ անասնելի ու վտանգաւոր կա-
ցութեան մատնելէ յետոյ, իրենք սկսան
խոյս տալ պարտականութենէ :

Արդ, գաւառացիներս՝ հայրենիքի չար-
չարուող տաքերս, կը յուսամք թէ պատ-
գամաւորական ժողովի ներկայ Դրդ. չըր-
ջանին, Ահմէտ Րիզա և իր կուսակիցնե-
րը զգալով իրենց սխալ քաղաքականու-
թիւնը, օգտակար ու մարդասիրական
քաղաքականութեան մը հետեւելով՝ պիտի
փորձեն ճանչնալ երկրին իրական պէտքը,
և օգտուիլ իրենց հայրենակիցներուն ան-
կեղծութենէն ու կարողութենէն : Իրենց
առաջին գործը պէտք է ըլլայ բոլոր պաշ-
տօնականները իրենց բոլոր գործառնու-

թեանց համար հաշուետուութեան ու պատասխանատուութեան հրաւիրող օրինադէմը քուէարկելով՝ զիսակից ու պարսաճանաց պաշտօնեաներ հրաւիրել գործ, վրայ, որպէսզի ներկայի նման ճգնաժամային որպէսներ և երկիրը ներքնապէս ու ար-

տաքնապէս վտանգող տեսարաններ չկրկնուին անպատասխանատու և անպարսաճանաց մարդկանց կողմէ. եւ արդէ, ինչ կ'ընշանայի անպատասխանատու պոստօնեայ և կառավարչութիւն...

ԳԱՐԵԳՐԵ ԱՌԷՆԵԱՆ

ԳԱԻԱՌԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ
ՄԱՐԶՈՒԱՆԻ ՄԷՋ

Վերջապէս տարրներէ ի՛ վեր Մարգը-ւանդիին փափաքած ու հետապնդած սա վիճակային բաժանումը կատարուեցաւ Սեպտ. 23-ին Կիրակի օր: Գեր. Տ. Գէորգ Մ. Վ. Իգրանտեանի առաջնորդութեամբ Գաւառական Երեսփոխանական Ժողովի ընտրութիւնը բացուեցաւ:

Գուէարկութեան օրը հրապարակ եկած էին քաղաքիս երկու կուսակցութեաննէրը — Ս. Դ. Հնչակեան և Հ. Յ. Դաշ-նակցութիւնը — իրենց ուրոյն ընտրելի-ներով՝ ընտրական պայքար մը մղելու համար: Հնչակեանները յաջողեցան՝ 671 քուէներէն 540 — 570 քուէները, առանց համեմատականի թողելու, իրենց 13 գան-տիտաներուն վրայ կեդրոնացնել: Ասոնց վրայ 3 կղերականներ և 2-3 աշխարա-կան երեսփոխաններ պիտի աւելնան Սլոժաճի Գիւղէն: Ժողովը իր առաջին նիս-տը գումարեց Տիար Գաբիկ Օզանեանի ատենապետութեամբ:

Այս առթիւ թէ ներկայ երեսփոխանա-կան Ժողովի և թէ իրմէ բղխելիք բոլոր մարմիններուն լուրջ նկատառման կը յանձնեմ տեղւոյս կրթական գործին նա-խանձելի վիճակին պահպանումը և աւելի յառաջացումը: Կը շնորհաւորեմ իրենց պաշտօնն և կը մաղթեմ անձուէր գոր-ծունէութիւն և յաջողութիւն:

Յ Հոկտ. 911

ԱԻԷՏՈՒՆԻ

Մարգուան

ՏԵՂԱԿԱՆ
ԼՍԱՐԱՆԵՐ

Ս. Դ. Հնչակեան կուսակց. տեղւոյս մասնաճիւղին լսարանը ամառնային ար-ձակուրդէ մը վերջ վերաբացուեցաւ Սեպ. ամսուան սկիզբը: Յաջորդաբար, օրուան հարցերու շուրջ, բանախօսելին Տեարք Հ. Թապիպեան, Յ. Դարամանեան և Դ. Աթէշեան: «Կուսակցութիւնները Ազգ. կրթական խնդիրներու մշտնջենական թէ ոչ» նիւթին շուրջ երկու շաբաթ տե-ւող վիճաբանութիւն մը տեղի ունենալով օգտակար եղբակայութիւններ հանուե-ցան:

Ստոյգ աղբիւրէ կ'ըմանանք նաեւ թէ ամսոյս 16-ին կըրակի օր Ս. Դ. Հնչակեան Բիւլալին մէջ պիտի բանախօսէ Յարգելի միւթէսարըֆ ԱՀՄԷՏ ՄԷՃԻՏ պէյ: Կը թելադրենք Ամասիացիներուն որ փութան ներկայ գտնուիլ սոյն բանախօսութեան:

Հ. Յ. Դաշնակցութեան լսարանն ալ վերաբացուելով յաջորդաբար օրուան նիւ-թերու շուրջ բանախօսելին Տեարք Լեւոն Լանիս, Դալուստեան և Չանարեան:

Ս. Դ. Հնչակեաններէ և Հ. Յ. Դաշ-նակցականներէ միջակուսակցական փո-ղովն ալ իր լսարանն ունենալով՝ բանա-խօսելին Տեարք Հ. Թապիպեան և Լեւոն Լանիս: Օրուան անհրաժեշտ պահանջնե-րու մասին կենսական թելադրանքներ ե-ղան ունկնդիրներուն, երկու բանախօս-ներու կողմէն ալ:

Դաշնակցական գործիչներ՝ Տեար Մու-

րատ և Տէր և Տիկին Աստիկաններ, Պօլսոյ Պատգամ. ժողովէ վերադարձին քաղաքը աչցելելով յաջորդաբար երկու իրիկուններ Դաշնակցական բեմէն օգտակար բանախօսութիւններ ընելով՝ մեկնեցան:

Կ. Կարմիր Պաշի միութիւնն ալ իր լրտարանն ունենալով՝ «Ձառակը հայրը կը կրթէ թէ ոչ մայրը.» նիւթին վրայ կէնները վիճաբանեցան:

Քաղաքիս մէջ Լեւոն Լանխի խմբագրութեամբ հրատարակուող շաբաթաթերթը վերսկսաւ հրատարակուիլ Տէջ ծառաւով: Յաջողութիւն կը մաղթենք մեր պաշտօնակցին:

ՀԱՆՐՈԳՈՒՏ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Սամսոն—Սիվող երկաթուղիի Օսմանցի երկրաչափներ ժամանակէ միվեր քաղաքըս գտնուելով՝ երկաթուղի, անցքը ուրշելու համար հարկ եղած երկրաչափական գործողութիւնները կը կատարեն: Նոյնպէս յօսել շինութեան մասին Ֆրանսայի երկրաչափներ յօսելի ճաշխուն վրայ հարկ եղած գործողութիւնները կը կատարեն:

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ

Ամասիա զինուորական կիսաբաժնի կեդրոն (ֆրիգա մէրքէզի) եղած բլլալով պաշտօնները գա սկսան:

ՆԱԽԱՏՈՐՄԻՂ

Քաղաքիս մէջ գտնուած թուրք և հայ կուսակցութիւններու ներկայացուցիչներով հաւատարմիւրի հանգանակիչ յանձնախումբ մը կազմուած է, որ ժողովրդեան զգալուններուն զրմելով հաւատարմիւրի համար դրամ պիտի հաւաքէ:

Տեղւոյս բողոքականաց քարոզիչ Վեր. Ս. Տօմպալեան հարժարած է Վէզրը Բէօփրիս գնալու համար: Իր նոր գործը չնորսաւորելով՝ յաջողութիւն կը մաղթեմք:

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Քանի մը բարեսէր ազգայիններու նախաձեռնութեամբ և 250—300 ազգայիններու անդամակցութեամբ կազմուեցաւ Ազգ. Հիւանդանոց: Վարչութիւն մը, որոնց բարի նպատակն է, տեղւոյս մէջ Սեբաստիոյ նման հիւանդանոց մը շինելով՝ ծառայել իրենց սառապեալ ազգակիցներուն: Գովելով իրենց նպաստակ, եւտնդը և նախաձեռնութեան ոգին, յարատեւութիւն կը մաղթեմք, միւսոյն ատեն թելադրելով որ ամէն ազգային անհատ օժանդակէ այդ բարենպաստակ ձեռնարկին:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Քաղաքական կեանքին անորոշ ու մութ վրձակ մը ստանալէն, տեղւոյս առեւտրական հրապարակը կայուն է: Սամսոնի հետ գործող վաճառականներ արտածելի նիւթերու գնումէն կ'զգուշանան: Պանքաները աֆանտ չեն ստար:

Հինէն ի վեր տարին մէկ անգամ քաղաքիս մէջ Հոկտ. 13ին տեղի ունեցող տօնավաճառը յետաձգուեցաւ Հոկտ. 21ին

ՀՈԿՏ. 13 ԱՄԱՆՍ

Իտալացիները Թրիպօլիի ներսերը կը յառաջանան:

Հազգը փաշայի դահլիճին համար կազմուած յանձնախումբը՝ Փարիզի դեսպան Րիֆաթ փաշայէն և Թրիպօլիի նախկին կուսակալէն կարգ մը բացատրութիւններ առնելէ յետոյ որոշեց սոյն դահլիճը պատերազմական ատենանին յանձնել:

«Ամասիա խմբագրական մարմինը կը ներկայացնէ. — Ս. ԻֆէֆձեԱՆ, ՅԱԴԱՐ, Գ. ԱԹԵՇԵԱՆ, ՄԻՐԱԿ, Ա. ՄԱՆԿՈՒՆԻ, ՎԱՆՈՒՆԻ:

Խմբագրակէ՝ ՄԻՆԱՍ ԻֆէֆձեԱՆ
Արտակալէ՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱԿԻՊԵԱՆ
ՏՊԱԳՐ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ

نقطه نظر لر من بر در و دائما بر اولمیدر . بوده مدینتک نائل اولدینی نعمت لر ، سعادت لر نائل
 مادیات جهتیدر . عثمانیلر یکدیگره معین و مظا اوله جغز .
 هر اولدجه ، طریق ترقی ده ال اله طوتنه رق اوروبا ملت لرینک تشکیل ایتدکلری (مدینت
 دوام ایتدکجه استقبالمز پک پارلاق اوله جقدر . قافلہ) سندن آیہاملی یز انلرک مساکلی اولان سیاه
 اولا قوتلنه جکر . زنکین اوله جغز ، قوتلی بر ست اقتصادیه یی تعقیب ایتمه لی یز چالیشان ملت لر
 ملت تهلمکدن مصوندر . کندیلرینی قورناریرلر . ایشته چاپونیا .

نانیا . مدینتده ایلرولیه جکر . بتون جهان
 آماسیه

احمد ماجد (*)

اینجتمه سن آتی

- نیجون آغلا یورسک اناجغم؟ ...
- هیچ قیزم ... بر شتی یوق ...
- سویله اناجغم ! سویله ! یوقسه دردکی وار؟
- بویله اغلا یه جق سنک بر کدرکی وار؟
- بیلیورم ، بابامده بوکون پک کدرلی در ،
- کدرکره سزک سبب عجبا کیم در؟
- بو ییل هوا قوراق کیتدی اکین آلهمدق .
- فائضدن قالان بورجمزی یز ویرمدک .
- قوشومزی صاتیور شمدی زنکین اغامز ،
- بوز قاله جق قیزم ! ارتق بوستان ترلامز .
- اناجغم ! او زنکین اغا آبی آدمدر ،
- بیاض ، قیرمزی شکر کتیردی بکا بلدیر .
- بن کیدر آغلا یه رق المرینی اوپرم ،
- صاته اوکوزلرمزی دیه یالواررم .
- قیزم ! اولور زنکینک قلبی دمیر ، طاشدن ،
- طاتی سوزله ، کولر یوزله صاوار سنی باشند .
- کیتمه یاوروم ! کیتمه قاندره مازسک سس آتی ،
- جانورده کولوب او قشایه رق آولر اوبنی .
- باق ! شو قاتلی ، طویماز دنیاده نه لر اولیور .
- یوقسولرر دائما زنکینلره یم اولیور .
- رنجبر ایسه ده انسانک سفره سن دوناتان ،
- اکمک بوله مه یورمه یه اوترلا سندن .
- * * *
- ای زنکین ! صاته سن چفتجینک اوکوزلری ،
- آغلایمه ! سن شو یوقسول رنجبرک کوزلری .
- بو دکل در دنیاده انسانلک قانونی ،
- یاذقدر یوقسول چفتجی یه « اینجتمه سن آتی »
- مرآت

(*) متصرفن سعادیلو احمد ماجد پک افندینک رساله مزک ضحائفی مفید مقاله سیله ترین و بوندن
 بویله ده دوام ایتکه وعد بیورد قلرندن طولایی تشکراتی عرض ایلرز . هیئت تحریریه

اوروپا نك مهم بر قطعه سنی اشغال ایدن دولت عثمانیه دخی بر اوروپا دولتیدر . قریم محاربه سندن صكره عقد اولنان پارس معاهده سنده بیوك رشید پاشا عثمانلیلك اوروپا لیلقلری دول معظمه یه تصدیق ایتدیرمشدر .

دول سائره نزدنده دائمی سفارتلر بولندیر . مقلغمز و قوتلی بر اردو و دونمایدیه محتاج اولماقلمغز بونك نتیجه سیدر .

بو سبیلده دركه اوروپا ملتیرینه مخصوص او . لان (حقوق دولدن) حق استفاده من واردر . بونده کی منفعت ایسه بك بیوكدر .

اللهه شكر : اداره مشروطه یه ده نائل اولدق حریت و مساواتی استحصال ایتدك . شمعی بزه لازم اولان اوروپا نك مدنی و معارف و افكار جدیده سیدر ؛ اوروپا لیلقلر مسلكیدر . صنایعی ،

تجارتی و باخصوص اك زیاده محتاج و مستعد اولدیغمز (زراعت) ی ایلری کوتورمهك چالیشمه لی یز . اوروپا لیلر کی چالیشمغه آیشمه لی یز .

مسئله ناصل چالیشه جغمزی ، نه ایشلر طوته جغمزی بیلمك و اوكره نمكدر . بونیده بیلملر بیلمه ینلره اوكره تمیلیدرلر .

سیاسة احتیاجز داخلآ اتحاد و اتقادده در .

بو طور اقدیه ییشن انسانلر آره سنده (اخوت وطنیه) واردر وطن قرده شملری آره سنده اشتراك منافع واردر .

هر قوم كندی دین و مذهبنسه سالكددر . بو نقطه معنویات جهتیدر . انك خارجنده وطنه ملكته ، ملتیه . ترقیه ، مدنیته عائد بتون مسائلده

فضله اوله رق سربستی اعمال و صنایع تیجه سی اوله رق فابریقه لر چو غالمشدر و چیقاردقلری اشیا دایما اوجوزلامقده در بو اشیایی صانه حق (مخرج) لر بولمق لازمدر .

بو مخرجلر ایسه اصل اوروپا خارجنده در . برده مدنیته ترقی ، قوت و سطوته ده تر قیه سبب اولدیغندن وجوده كتیردكلری بیوك و منتظم اردولری ، دهشتلی دونمالری ایله او . روپالی اولمیان ملتله هر ایسته دكلری قبول ایتدیرمك وسائطه مالمكدرلر .

بكن عصرده چینیلر اوروپا لیلر مملكتلرینه گیدوب صاندقلری (آفیون) صندوقلری ضبط ایله تجارتی منع ایتمه لری اوزرینه انكیزلر چینیلر ایله محاربه یه کیریشوب آفیون آلفه اجبار ایتشلردر .

اوروپا لیلر مقصدی هم اوراده بك مهم اولان آفیون تجارتی ادامه ایله تامین تجارت ایتك ، باكه ده آسیای شرقینك بو قوجه ملتی آفیون ایله اویوشدیره رق اویا تمسنه مانع اولماقدر [۱] الحصل اوروپا لیلر قوتلندكجه زنكین اولمشلر ، زنكین اولدكجه قوتلری آرتیره رق استقبال لری تامین ایتشلردر .

[۱] چتیلر درتیوز میلیون نفوسه بالغ اولیورلر . چینیلر بك غلبه لك اولدقلری ایچون اوروپا لیلر بر کون بونلرک اویانوب انتظام کسب ایدوب او . روپایه هجوم و ضبط ایتلرندن قورقارلر .

و چینیلرک بوخیل تعرضه (Peril jaune) صاری تهلكه دیرلر .

ایتمکه . راحت یاشامغه باشلانجه بالطبع ترقی ایتدیلر
فرانسه دن صکره صره سیله هر طرفدن حکو
ملتر شکل مشروطیت اکتساب ایتدیلر . هله
صوک یاریم عصر دئیری اوروپاده روسیه دن ماعدا .
(پارلمنتوسز) بر ملت قالمش ایدی .

امنیت ، راحت و سعادت ایچنده یاشایان او
روپالیرک مدنیتده ترقیسی ، ثروجه و نفوسجه
دخی ترئیسنی مستلزم اولشدیر . فنون و معارف
ایلری کیتمش ، هر کسک اوقوبوب اوکره نمسه
چاره لر بولمیش . صنایع و تجارت فوق الحد
وسعت المش ، یوللر ، شمندوفرلر ، واپورلر چو
غله رق اوروپالیرلر دنیانک هر طرفنه طایغلمغه
باشلامشدر .

وانعا ، اوروپالیرلرک شمدی دنیانک بش قطعه
سندده مستملکاتی (Colonies) وار در که اورا
لرک محصولاتی کنسدی مملکتلرینه و کنسدی
مملکتلری معمولاتی اورالره کوتوروب صاهره
تجارت ایتمکده درلر .

اوروپا ملتلرینک بویه دنیانک دیگر قطعه
لرینه یاییلمه لرلی اول بول (تکرر نفوس) ک
نتیجه طبعیه سیدر .

اوروپا قطعه سی ، بش قطعه نیک کوچو
کیدر راحت و سعادت بولان ملترلر چو غالیلر
چو غالدجه انتشار ایده جک یلر ، یکی یکی
(طوبراق) آرارلر .

اوروپا قطعه سنک سکمه سی بوندن بر عصر
اولنه نسبتله بر مثلی آرتمشدر . بولر مملکتلرینه
سیغیمورلر . کیده جک بر آراپورلر .

هله براز ده ارجاع نظرله ایکی ، اوج عصر
اولکی حاللری اکلار و بو کونکی ایله مقایسه
ایدر ایسه که هر برینک صانکه باشقه ملترلر ایش
کی معیشتلرنده فرق عظیم کورورز بو تحولات
و تکملاتک اسباب موجب سی شبهه سز (مدنیت)
در و انک مولدی اولان (معرفت) در .

دنیاده هر شیئه حاکم اولان مطلقه (بیلکی) در .
اوروپالیرلر مدنیتده ، ملل سائرده دن زیاده ترقی
ایتدیلر چونکه ده اول اویندیلر . (فتودالبته —
دره بکلکی) دورنده ، مذهب محاربه لرلی زما
ننده ، اسارتک مشروع عد اولندی و قتلده پک
چوق جفالر چکدیلر . پک چوق تلفات و یردیلر
اشکجه لره ، اذیتلره اوغرا دیلر . . لکن کیت
کیده (حقوق انسانیه) لرینی اوکره ندیلر . و
ظلم و استبداد زنجیرلرینی قیروب حریتلرینی
اکتساب ایتدیلر .

انکترده ایکی یچق ، فرانسه ده بر عصر دن
بری (پارلمنتو) وار ! .

بو ایسه (حاکمیت) ملیه دیمکدر .
فرانسه اختلال کیرنده قلمه انسان مشهور
(حقوق بشریه بیاننامه سی) نک برنجی ماده سی
انسانلرک حر و متساوی اوله رق طوغدقلرینی ؛
ایکنجی ماده سی حریت ، حق تصرف ، امنیت
و ظلمه مقاومت کی حقوق بشریه یی ؛ اوچنجی
ماده سی حق حاکمیت و حکومتک طوغریجه
ملتن صادر اولدیغنی معلندر .

اوروپالیرلر استبداد دن قورتیریده سربسته
چالشمغه ، قازاندیغنی مغلبه نیک ید غصبندن محافظه

والحاصل بالجملة عثمانيليرك حقوق و منافعی مدافعه ایدمه جك . اوت ... او طشره ادبیاتنك وجود بولسنه تقویت و برمه جك . او طشره املنك عاملی سیاست و معرفت مطالینك حاملی هر درلو مسائلنك مشاوری بولنه جق . والحاصل طشره نك تشدت آتش درد لرینه بر مرهم اولمغه چالیشه جق .

هیئت تحریریه من « آماسیه » دن هیچ بر کونه مكافات ماده کوز تممکله برابر طشره به و قارئین کرامه فائده لی اولمق ایچون چالشمقنی وعد ایله مفتخر در . اگر قارئین کرام طرفندن ولو جزئی اولسون تقدیر و تشویق ایدیلور ایسه کندینی بختیار و مكافات معنویه نائل اولمش عد ایدمه جك . هیئت تحریریه من عثمانلی وطنداشلمزك قلبلرینی دها یقین بر صورته یکدیگر لرینه آجه ییلمك و طشره لیلرک درد و مطالبی طوغریدن حکومتزه عرض ایدمه ییلمك سهولتی ایچون « آماسیه » نك اون الی صحیفه لرندن دردینی و ایجابنده دها زیاده سنی ترکیه مقبله لره حاضر ایتمکی وظیفه دن عد ایتشدور . « آماسیه » نك قوه ماده سنی تأمین ایتدکدن صکره کرک طشره و کرک در سعادته بولنان ارباب قلم و اقتدارك دائما توجه لرینه نائل اولمه ییله جکمزى وعد بیورملری هیئت تحریریه منك موجب محظوظیتی اولمشدر . بناء علیه قارئین کرام رساله منك هر صحیفه سنده طشره نك دردیه دردمند ارباب قلمك اثر لرینی کوره جکلرینه امین اولمه ییلرلر . رساله من شمیدیلک اون بش کونده بر دفعه نشر ایدیه جك و بتون سنه ظرفنده آبونه لرمنه یکرمی درت نسخه ویریه جك بو آبونه بدلی ایسه یالکتر مطبعه مصارفندن عبارت اولمه جقدر .

هیئت تحریریه من قبول و عرض ایلمش اولدینی پروگرامی ایضاح ایله « آماسیه » نك کندی جدی و حقیقی مقصدینه واصل اولمسی ایچون طشره دردیه دردمند و ولایاتك ترقی و تعالیسنه سعی و غیرت ایدن بالجملة ذوات کرامه و ارمیجه و ترکیه جرائدك محترم محرر لرینه و اداره لرینه مراجعتله معاونت معنویه بولتملرینی استرحام ایلر .

هیئت تحریریه

❖ اوروپالیرك مسلكی ❖

تواریخ ملی تعقیب ایدنلر ، عالم مدنیته یاشا . دائرة مدنیته داخل اولان مللرک شمیدیکی بان اقوامك هر عصرده نه بیوک تبدلاته اوغرا . احوالی . شمیدیکی افکاری ، شمیدیکی تحسباتی دقلرینی کوررلر . بوندن بر عصر اولکنه بکزمیور .

اماسیه

طشره منادیسی

نومرو ۱

تشرین اول ۱۵ سنه ۳۲۷

رنجی سنه

مقصدمز

اعلان حربی متعقب ولایاتده یکی بر حرکت ادبیه میدان کلدی . داخل ولایاتده حکم فرما اولان شو حرکتک دوامی تأمین آرزوسیه هر طرفدن مسالك مختلفه ایله جرائد و رسائل موقوته موقع انتشاره وضع ایدلدی . فقط مع التأسف بونلردن بعضیلری محیط و موقعلرینک ترجمانی اولهمدقلرندن تشویق و ترغیب ایدیلهمیههرك قوه مادیه و معنویه لرینی غائب ادوب عالم نشریادن چکلدیلر و دیگر بعضیلری ایسه طشره احوالنه کسب وقوف و ولایت دردلرینک ترجمانی اولهمیدیلکری قدر رغبت بولوب بیک بر درلو مشقته کوکوس کهرهرك وظیفه صداسنه . ستماع صورتیله یشامقدهدرلر .

امدی هیئت اداره و تحریریه مز اول امرده ولایات افکارینی اظهار ایدن و یالککز ولایاتده مخصوص اولان بر رساله نك اشد لزومنه مطلع اولدیغندن و بویه بر رساله نك دوام ادوب فائده لی اولهمبیلهمسی ایچون احتیاجات مهمه دن بولسان قوای مادیه و معنویه سنک تأمین جهتی دخی نظر اعتباره آلدقندن صکره « آماسیه » یی نشر ایتمک قرار ویرمشدر . ایشته « آماسیه » رساله سنی مادی و معنوی هر درلو تأمیناتیه و ولایات اهالیسنک درد و احتیاجاتی تأکید و اظهار ایدن مندرجاتیه میدان انتشاره وضع ایله کسب فخر ایلر .

رساله مز بلا تقریق جنس و مذهب ولایات احوالی و طشره اموریه مشغول اوله جق آنک کوز یاشلریله اغلایه جق غم و کدرینی اظهار ایده جک آنک محنت و مشقتی نظر دفته آله جق . آنک موفقیاتی مدح و ثنا ایده جک . آنک ترقی و تعالیسنه رهنا اوله جق . آتی قهر تدمیر ایدن مظالمه قارشو تشکی ایده جک . غدار و حیارلره قربان اولمقدن آتی صلا ندره جق . خیلی سنه لردن برو اضطراب و مشقت ثقلنی آلتنده ایکلین اسلام ، ارمنی و رومک

ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՔ

Միւսքեպիսին Վեգարը. — Հմայեակ Ա. քամեան յի Բունակալին Մանը ծանօթ թաւերախաղին հայատառ թուրքերէն թարգմանութիւնն է՝ զոր կատարած է Հրանտ Սէվտեան (Հիւրրի). հրատարակութիւն՝ Սուսկուրուի Ս. Դ. Հնչակեան մասնաճիւղին՝ Թրքախօսներու համար: տպագր. Կիւթէմպէրկ Մարգուան, գին 2.50դր., 60 էջ:

Ալդիլին Նահմիրները. — Մամիկոն Վարժապետեանը հեղինակութիւնն է. հեղինակին լուսանկարով. բնօրինակ, արպագրութիւն և կողք ունի: Ոգեղից բմպիւններու կենսամաշ հետեւանքները կը նկարագրէ: էջ 48, գին 2դր.:

Հայկական Նոր Եկեղեցի. — Հեղինակութիւն Մամիկոն Վարժապետեանը: Եկեղեցական բարեփոխումներու մասին կը խօսի: էջ 55 գին 2դր.:

Կնքիկներ. — Հեղինակ՝ Մամիկոն Վարժապետեան. 25 սիրուն ոտանաւորներ. զարդարուած՝ իրիմեանի, Նալբանդեանի, Գամառ Գաթրապայի, Ժիրայրի, Պ. Դուրեանի և հեղինակին լուսանկարներով: էջ 40 գին՝ 60փր.:

Ատալիաներ. — Հայ իրականութեան առնուած կարեւոր մի քանի հարցերու մասին տեսութիւններ ու թելադրանքներ: հեղինակութիւն՝ Մ. Վարժապետեանի: էջ 44, գին 50փր.:

Վերայիշեալ գրքերէն գնել փափաքող թող գլխէ խմբագրութեանս:

ԲՈՂԲՈՋ

ԱՄՍԱԹԵՐԹ ՆՈՐԱՀԱՍ ԳՐՈՂՆԵՐՈՒ

Խմբագրողեալ՝ Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Արտօնատէր՝ Ա. ԵՕԶԿԱՏԼԵԱՆ

Տպագրութ. Կիւթէմպէրկ — Մարգուան Հասցէ՝

Կիւթէմպէրկ ՏՊԱՐԱՆ — ՄԱՐԶՈՒԱՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ

Ա.ՄԱՍԻՍ.

Ոսկի գործու եւ պրիճ նաեւ սէշիւրոյս արհեստական սաւմներ շինելու Ամերիկեան մեթօսը սորվիլ ուզող բոլոր ասամնաբոյժներու կը յայտարարէ թէ ինք պատրաստ է այդ մեթօսը սորվեցնել նպաստաւոր պայմաններով:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՍԻՍՈՆ ՖԱՐԸԽԵԱՆ

Ա.ՄԱՍԻՍ.

Կը կատարէ՝ կեանքի և հոգեքի ապահովագրութիւններ նպաստաւոր պայմաններով:

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Կեանքի՝ ԼԱ ՆԻԻԵՕՐԻ Ընկերութիւն

Եւ հոգեքի՝

ԼԱ ԼԻՊԵՐԱԼ

Ֆրանսական ընկերութեան

ԹՈՒՐԲԵՐԵՆ ՍՈՐՎԻԼ ՈՒԶՈՂՆԵՐՈՒՆ

Այդ լեզուին ծանօթ ուսուցիչ մը տրամադիր է նպաստաւոր պայմաններով այցելու դասախօսութիւններ ստանձնել: Փափաքողներ թող դիմեն խմբագրութեանս:

اماسیہ

شرائط اشترا
بر سنہ لکھی بر مجید
الٹی آیلنی یارم مجید در

صاحب امتیاز و
مدیر مسئولی
حایقازون طبییان

یاخود

سر محرری مناس ایپکجیان

طشره منادیس

سیاسی فنی ادبی اقتصادی و اخلاقی غزته در
هر اون بش کونده بر نشر اولنور

نومرو ۹

۱۳۲۷ تشرین اول

برنجی سن

محتویات

هئیت تحریریه

مقصد من

اماسیہ متصرفی احمد ماجد بک

اوروپالیک مسالکی

مرات

ایختمه سن آئی (شعر)

مطبعه مزده ترکیه ارمنیجه روجه فرانسیزجه و انگلیزجه ایسانلریله هر نوع اعلانات،
اوراق تجاریه قارت ویزتله، مکتوب باشلی، کتابله، غزته لر و مطبوعاته عائد سائر هر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولنیور. مقصد یکانه من محترم مشتریلر منی نمون
قلماق در. هوونایان و یاردیمیان شرکاسی

Տպարանիս մէջ Տպութիւն, Հայերէն, Յունարէն, Ֆրանսերէն, եւ Անգլի-
ներէն լեզուներով ամէն տեսակ Ազդեր, Վաճառականական բոքեր,
Բարձր վիզիւթեր, Նամակագրութիւն, Գրքեր, Թերթեր եւ տպագրական
ուրիշ ամէն տեսակ գործեր խնայ մասնաւոր եւ նաեւ անոր կը տպագրուին:
Միակ նպատակնիս է գոն քոզու յարգելի յանախորդները:
Յով. ՆԱՆՆԱՆ եւ ԵԱՔՏԷՄԵԱՆ

آماسیہ

مطبعه هوونایان و یاردیمیان